

Առ Վսեմ. Ի.Օ.Օ.Լ.Թ. Փաշայ կառավարիչ Ա. Վաղարիս :

Վսեմախալ Տէր

Ձեր պաշտօնական միջնորդութեան արգասիքն է զոր ստացաւ սուրբ Աթուռ Ն. Կայսերական Վեհափառութենէն ամսաթերթի մի Հրատարակման արտօնագիրը . շնորհք մի զոր ի վաղուց հետէ կը ցանկայինք ձեռք բերելու , և բաղդը մինչեւ ցարդ զլացած էր մենէ , թերեւս ժամանակին թողլով՝ որ Ձեր միջնորդութեամբն ընդունի զայն : Ն. Կայսերական Սեծափառութիւնը , ինչպէս շատ պարագայի մէջ , նոյնպէս և այս անգամ ազատական ոգւով ցոյց տուաւ մեզ իւր հպատակ թողովդոց դէպ ի յառաջագիմութիւն մղելու համար իւր ունեցած փափագն ու ջանքը . և այս յառաջագիմութեան իբր գործի համարելով հրապարակական թերթերը , կը հրամայէ մեր սուրբ և առաքելական Աթուռոյս ամենախոնարհ միաբանութեան ՍԻՕՆ անուն ամսաթերթս անարգել հրատարակելու յօգուտ ընդհանուր Ազգիս և ի պարծանս նորին ամենողորմած Կայսերութեան :

Արդ , Վսեմախալ Տէր , կը խնդրեմք այս անգամ եւս մի խնայէք Ձեր միջնորդութեամբը ներկայացընելու յոտս Օգոստոսիառ ԱՊՏԻԼ-ԱՕԻՕ, բարեխնամ Թագաւորին՝ մեր շնորհակալութեան և ամենախոնարհ հպատակութեան հաւաստիքները , որով մնամք միշտ աղօթարար վասն պայծառութեան հզօր Տէրութեանն և երկարութեան թանկ կազին կենաց Նորին , խնդրելով ամենաթագաւորէն Աստուծոյ որ պահպանողական Աջը իւր Օգոստոսական Աթուռին վրայէն անսրկաս ընէ :

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

1 ՅՈՒՆԻԱՐԻ 1866

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս . ՈՒԽՏԻՍ